ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2573 - Ա **14 ապրիլի 2009թ.**

ՄԱԼԱԹԻԱՅԻ ՓՈՂՈՑԻ Հ. 92/13 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԲԻԿ ՊԱՐԻՆԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ, ԱՍՏՂԻԿ ՋԱՆԻԿԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ, ԱՐԻՍՏԱԿԵՍ ԹԵԼՄԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ՍԵՅՐԱՆ ՌՈՒԲԻԿԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ, ՍՈՒՍԱՆՆԱ ՌՈՒԲԻԿԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ռուբիկ Պարինի Բաբաջանյանի ծնված 18.12.1954թ.), Աստղիկ Ջանիկի Բաբաջանյանի (ծնված 01.01.1956թ.), Արիստակես Թելմանի Ղազարյանի (ծնված 01.01.1997թ.), Սեյրան Ռուբիկի Բաբաջանյանի (ծնված 05.06.1973թ.), Սուսաննա Ռուբիկի Բաբաջանյանի (ծնված 12.01.1975թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Մալաթիայի փողոցի հ.92/13 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 277.38քմ, որից 62քմ մակերեսով հողամասը Երևանի քաղաքապետի 26.02.1999թ. հ.198 որոշմամբ Ռուբիկ Պարինի Բաբաջանյանին, Աստղիկ Ջանիկի Բաբաջանյանին, Արիստակես Թելմանի Ղազարյանին, Սեյրան Ռուբիկի Բաբաջանյանին, Սուսաննա Ռուբիկի Բաբաջանյանին տնօրինման և օգտագործման թողնված հողամասն է: Բնակելի տան զբաղեցրած հողամասին կից օգտագործվող 215.38քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1970 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 20.10.2008թ. հ.100, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 18.03.2009թ. հ.20/2-Ե/131 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 10.03.2009թ. հ.20-Ել-1626 եզրակացությունը, համաձայն որի Մալաթիայի փողոցի հ.92/13 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Մալաթիայի փողոցի հ.92/13 հասցեում Ռուբիկ Պարինի Բաբաջանյանին, Աստղիկ Ջանիկի Բաբաջանյանին, Արիստակես Թելմանի Ղազարյանին,

Սեյրան Ռուբիկի Բաբաջանյանին, Սուսաննա Ռուբիկի Բաբաջանյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 62քմ մակերեսով հողամասի չափով, բնակելի տանը կից հողամասի հողօգտագործման իրավունքը 215.38քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 277.38քմ մակերեսով հողամասի և 215.38քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Մալաթիայի փողոցի հ.92/13 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Մալաթիայի փողոցի հ.92/13 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Ռուբիկ Պարինի Բաբաջանյանի, Աստղիկ Ջանիկի Բաբաջանյանի, Արիստակես Թելմանի Ղազարյանի, Սեյրան Ռուբիկի Բաբաջանյանի, Սուսաննա Ռուբիկի Բաբաջանյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա–Սեբաստիա թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**